ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 157-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու ֆինանսական և սոցիալ-տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի դրական եզրակացությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Տ. Արեյանի 2024 թվականի նոյեմբերի 19-ի N/27.1/46942-2024 գրությամբ ներկայացված պետական փորձագիտական եզրակացությունը.

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի.

1) եկամուտների մասով՝ 1443000,0 /մեկ միլիարդ չորս հարյուր քառասուներեք միլիոն / ՀՀ դրամ,

2) ծախսերի մասով՝ 1443000,0 /մեկ միլիարդ չորս հարյուր քառասուներեք միլիոն/ ՀՀ դրամ,

3) հավելուրդը կամ պակասուրդը՝ 0 դրամ:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում բյուջեի տնտեսագիտական և գործառնական դասակարգման հոդվածների միջև կատարել սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 40%-ը չգերազանցող վերաբաշխումներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԲԱՐՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՄԱԿԱՐՅԱՆ ՄԱՐՅԱՄ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԵՓԽԱՆՅԱՆ ՍԵՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՐՓԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ